

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՀՈՂՈՒՍ ԳԻՒՂԸ ՅՈՒՆԱԼԵԶՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Գեորգ Ղազարեան

Հայոց պատմութեան մեծագոյն աղետը՝ Յեղասպանութիւնը, մարդկային անդառնալի կորստից, մեր պատմական Հայրենիքի Հայաթափումից, հոգեւոր ու մշակութային ժառանգութեան ոչնչացումից զատ ունեցաւ ևս մեկ կործանարար հետեւանք՝ մեր Հայրենական պատմութեան բազմաթիւ էջերի անհետացումը: Ահա այս տեսանկիւնից յոյժ ուրախալի է, որ կորուսեալ Հայրենիքի այս կամ այն հատուածի վերաբերեալ նոր ու անծանօթ նիւթեր են ի յայտ գալիս:

Մեր այս յօդուածով ցանկանում ենք Հայագէտների լայն շրջանակին տրամադրել Հայ հոռոմներ¹ Հողուս (Հողիս) գիւղի մասին յունալեզու երկու ուշագրաւ յօդուածներ, որոնք եզակի տեղեկութիւններ են պարունակում վերոյիշեալ բնակա-

վայրի մասին²: Դրանք առաւել արժեքաւոր են այնու, որ Հայկական աղբիւրներում ու հետազօտութիւններում Հողուսի մասին տեղեկութիւնները սուղ են³: Ուստի նախաձեռնեցինք այդ յօդուածները թարգմանել Հայերէնի՝ օժտելով ներածական տուեալներով և անհրաժեշտ ծանօթագրութիւններով:

Քանի որ Հողուս գիւղը գտնուում է պատմական Բարձր Հայք նահանգի Դարանաղեաց գաւառում, ուստի նախևառաջ հարկ ենք համարում ամփոփ ներկայացնել այդ տարածաշրջանի յատկապէս եկեղեցական պատմութեան հանգրուանները:

1 Հայ հոռոմների, այսինքն՝ ուղղափառ (օրթոդոքս) հայերի մասին տե՛ս Յ. Կ. Ծանիկեան, **Հնութիւնք Ակնայ**, Թիֆլիս, 1895, էջ 55-60; *Ակն և ակնցիք*, նախաձեռնեց և հաւաքեց Ա. Քէչեան, աշխ. և խմբ. Մ. Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 615, 621; *Ակն և Ակնցիք. 1020-1915*, հաւաքեց, դասաւորեց և խմբագրեց Ա. Քէչեան, Պուրէշ, տպ. «Հայ մամուլ», 1942, էջ 49-53. **R. H. Kévorkian, P. B. Paboudjian, Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide**, Les Editions d' Art et d'Histoire "Arhis", Paris, 1992, էջ 138-140, 379-380, 386, 456; **H. R. Georgelin, «Arméniens ou Grecs? Les Hay-Horoum aux XIXe et XXe siècles»**, L'Église arménienne entre Grecs et Latins, fin XI^e- milieu XV^e siècle, textes réunis par I. Augé et G. Dédéyan, Geuthner, Paris, 2009, էջ 241-260. **Գ. Ղազարեան, Ակնի հայ հոռոմները**՝ «Վարձք», թիւ 12, 2016. **Գ. Ղազարեան, Ակնի վանք գիւղի 1787 թուականի հայ հոռոմների Աւետարանը**, Բանբեր Մատենադարանի, 24, 2017, էջ 221-232; **G. Kazaryan, The Orthodox Armenians (Armenian Horoms) of Akn**, "Vardzk", № 12, 2016, էջ 19-26:

2 Պետք է նշել, որ 1965 թ. Աթէնքի Փոքրասիական հետազօտութիւնների կենտրոնի (Κέντρο Μικρα-σιατικών Σπουδών) աշխատակցութիւն է. Ղազիմ մեկնել է Դիավատա և տեղեկութիւններ է քաղել տարեց երեք բնիկ հողուցիներից: Դրանք հիմնականում նույնական են այստեղ ներկայացուող յօդուածների վկայութիւնների հետ: Է. Ղազիի հաւաքած միւթը պահուում է կենտրոնի պահոցում՝ յատուկ ծրարում (Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδο-σης/Φάκελος «Χώρα Ευφράτης-9-Χογούζ»): Ծրարի ազգագրական միւթը մենք արդէն հրապարակել ենք առանձին յօդուածով (տե՛ս **Գ. Ղազարեան, Արևմտեան Հայաստանի հայ-հոռոմների աւանդազրոյցներն ու աւանդոյթները**), Գիտութիւնների ազգային ակադեմիայի Ծիրակի Հայագիտական հետազօտութիւնների կենտրոնի Գիտական աշխատութիւններ, 2020, թիւ 2 (23), էջ 218-219):

3 Օրինակ՝ «Հայաստանի և յարակից շրջանների տեղանունների բառարան»ը սահմանափակուում է Հողուսի վերաբերեալ հետևեալ սեղմ ու անստոյգ նշումով. «Գիւղ Արմ. Հայաստանում, Խարբերդի մահ-ի Ակնի շրջ-ում: Բնակիչները հայ կաթոլիկներ էին և չէին ընդունում իրենց հայ լինելը (ՀՅԾՏԲ, հ. 3, էջ 435):

Եկեղեաց և Դարանաղեաց գաւառները⁴ դեռևս նախաքրիստոնէական շրջանում Մեծ Հայքի կարևորագոյն կրօնական կենտրոններից էին. այստեղ՝ Երիզա աւանում էր գտնուում Անահիտի նշանաւոր մեհանը, իսկ Կամախ ամրոցում՝ Արշակունեաց տոհմական դամբարանն ու գանձարանը (մինչև 369 թ.): Կամախում էր գտնուում նաև Արամազդի մեհանը⁵: Դարանաղեաց, Դերջանի, Մանանաղեաց և Եկեղեաց գաւառները բաւականին վաղ էին լուսաւորուել Աւետարանի քարոզչութեամբ: Այսպէս, 301 թ. յետոյ Եկեղեաց գաւառը դարձաւ քրիստոնէայ Հայաստանի հոգևոր օջախներից մեկը⁶:

387 թ. Մեծ Հայքի առաջին բաժանման արդիւնքում նշեալ տարածքներն անցան Արևելահռոմէական կայսրութեանը

և այստեղ հետզհետէ ամրապնդուեց Կոստանդնուպոլսի պատրիարքի հոգևոր իշխանութիւնը: Ե. դարի սկզբում Դերջանի եպիսկոպոսն էր Գինգը (Գնիթը), որը սբ. Սահակի և սբ. Մեսրոպի գործակիցներից էր⁷, իսկ Եկեղեաց առաջին յայտնի եպիսկոպոսն է Յովհաննէսը, որի մասին վկայութիւնը վերաբերում է շուրջ 458 թ⁸: Յետագայում՝ Զ. դ., Եկեղեաց թեմի առաջնորդանիստը դարձաւ Ծումինա (Ճիմին) քաղաքը, որն ի պատիւ Յուստինիանոս Ա. կայսեր (527-565 թթ.) վերանուանուեց «Յուստինիանուպոլիս»⁹:

Զ.-է. դդ. Եկեղեաց և Կամախի առաջնորդները գործունեայ մասնակցութիւն էին բերում Ընդհանրական Եկեղեցու կեանքում: Այսպէս, 553 թ. Կոստանդնուպոլսում գումարուած Ե. Տիեզերական ժողովին մասնակցեց Յուստինիանուպոլսի Գէորգ (Գրիգոր) եպիսկոպոսը, իսկ 681 թ. Զ. Տիեզերական ժողովին մասնակցած Հայրապետներից էր նոյն քաղաքի Թէոդորոս և Կամախի Գէորգ եպիսկոպոսները: Վերջինս մասնակցել է նաև 692 թ. Տրուլոսի ժողովին¹⁰: Բացի այդ, 879 թ. «Կելձե-

4 Ըստ Աշխարհացոյցի՝ Մեծ Հայքի առաջին մահաճ Բարձր Հայքն ունէր ինն գաւառ. Դարանաղի, Աղիւն, Մզուր, Եկեղեաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Ծաղգամք և Կարին (տե՛ս Մովսիս Խորենացոյ Աշխարհացոյց հանդերձ յաւելումովք մայրնեաց, Մատենագիրք Հայոց, հտ. Բ, Ե դ., էջ 2151): Այս մահաճի վերաբերեալ օտար և հայկական սկզբնաղբիրների տեղեկութիւնները համահասար տե՛ս Հ. Ղուկաս Վարդապետի Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 1822, էջ 1-36:

5 Տե՛ս ՀՅԺՏԲ, հ. 2, էջ 913: Երզնկայ և Կամախ քաղաքների պատմական անցեալի մասին ամփոփ տե՛ս Թ. Խ. Յակոբեան, Պատմական Հայաստանի քաղաքները, Եր., «Հայաստան», 1987, էջ 119-126, 153-156:

6 Նշեալ տարածքների եկեղեցական պատմութեան վերաբերեալ կարևոր դիտարկումներ է անում Ն. Աղոնցը, որը նշում է. «Փոքր Հայքից եկող քրիստոնէութիւնը մայր և առաջ անմիջապէս տարածուեց նրան յարող շրջաններում, այսինքն՝ Դարանաղիում, Եկեղեաց գաւառում, Դերջանում և այլն: Փաստորը յաճախ եղջրում է, որ Դարանաղի և Եկեղեաց գաւառները պատկանում էին Լուսաւորչի տոհմին. Գրիգորը և Վրթանէսը թաղուեցին Թորդանում, Արիստակէսը՝ Թիլում, Յուսիկը թէև վախճանուեց Ծոփքում, բայց նրա մարմինը բերուեց և թաղուեց Թորդանի տոհմական դամբարանում» (Ն. Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացութիւնը ըստ հայաբարբառական կարգերի, Եր., «Հայաստան», 1987, էջ 389):

7 Տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Մատենագիրք Հայոց, Ե դ., հտ. Բ, էջ 2089, 2095:

8 Տե՛ս G. Fedalto, *Hierarchia Ecclesiastica Orientalis*, Series Episcoporum Ecclesiarum Christianorum Orientalum II. Patriarchatus Alexandrinus, Antiochensis, Hierusolymitanus, edizioni Messagero, Padova, 1988, էջ 845: Պատմական այլապի աղբիրներից յայտնի են Ե.-ԺԴ. դդ. Երզնկայում հովուապետած տասներեք առաջնորդների անուններ (նոյն տեղում): Պէտք է նշել, որ պրոֆ. Զ. Ֆեդալտոն Կամախի մետրոպոլիտութիւնն իր թեմերով հանդերձ սխալաբար յատկացնում է Անտիոքի պատրիարքութեանը, այնինչ բիզանական «Կարգագրութիւններից» միանշանակ երևում է, որ սկզբնական շրջանում այն եմթակայ էր Կոստանդնուպոլսի հայրապետական Աթոռին: Նաև՝ նոյն տեղում հետազօտողը նշում է 1817 թ. Եկեղեաց առաջնորդ Յովակիմի անունը, սակայն հաւանաբար խօսքը սոսկ տիտղոսակիր եպիսկոպոսի մասին է:

9 Տե՛ս Ն. Աղոնց, նշում աշխ., էջ 167:

10 Նոյն տեղում, էջ 404:

նէի», այսինքն՝ Եկեղեաց Գէորգ եպիսկոպոսը մասնակցել է Փոռ պատրիարքի՝ Կոստանդնուպոլսում գումարած նշանաւոր եկեղեցական ժողովին¹¹:

Յայտնի է, որ մինչև Ժ. դ. սկիզբը Կամախ քաղաքը Կողոնիա բանակաթեմի տուրման¹² էր, իսկ 911 թ. միաւորուեց Եկեղեաց գաւառի հետ՝ կազմելով նոր բանակաթեմ՝ «Միջագետք» (*Μεσοποταμία*) անուանումով¹³: Նոյն ժամանակաշրջանում, Նիկողայոս Ա. Միստիկոս պատրիարքի (901-907, 912-925 թթ.) «Կարգադրութեան» մէջ վկայուած է Կամախի մետրոպոլիտութեան գոյութիւնը՝ ենթակայ ութ եպիսկոպոսութիւնների հետ մեկտեղ («ὁ Κελτζηνῆς, ὁ Ἀραβράκων, ὁ Βαρζανίσσης, ὁ Μελοῦ, ὁ Μελοῦ ἕτερος, ὁ Ρωμανουπόλεως, ὁ τοῦ Τιλίου, ὁ Βαρζανίσσης ἦτοι Θαλουάσης»)։ Տեսանելի է, որ այդ

ութ եպիսկոպոսական թեմերից մեկն էր *Κελτζηνῆ* կամ *Ἀκιλησηνῆ*, այսինքն՝ Երիզայի (Երզնկայի) թեմը։

Արդ, պարզ է, որ դեռևս վաղ Միջնադարից Եկեղեաց գաւառում հաստատուել էր Կոստանդնուպոլսի պատրիարքութեան հոգևոր իրաւասութիւնը, տեղի բնակչութեան զգալի մասն էլ հէնց այդ հայրապետութեան հօտն էր կազմում։ Օրթոդոքս հայոց կամ այսպէս կոչուած «ծայթերի» ներկայութիւնն այստեղ զգալի էր նաև յետագայ դարերում։ Օրինակ՝ շուրջ 1410 թ. Մխիթար Ապարանեցին գրում է. «Եւ ոմանք կոչին Ծաթ Հաեր (*sic*), որ լեզուով և գրով ազգաւ են Հայք, բայց դաւանութեամբ և ամենայն օրինօք են Յոյնք, և ամենայն կարգաւ հնազանդ նոցա, որպէս յայտ է այնքիւկ (*sic*) որք են ի Եբզընկէն և ի յայլ Հռոմոց տուն և ի Կաֆէն, ի Ղրիմն և ի յայլ բազում տեղիս»։¹⁵

Ինչ վերաբերում է Հոդուս գիւղին, ապա դրա մասին յիշատակութիւններն սկսւում են Ժէ. դարից։ Այսպէս, Գրիգոր վրդ. Կամախեցին (1576-1643 թթ.), 1597 թ. ջելալիների մի ապստամբութեան մասին խօսելով, յիշատակում է Կամախի շրջանի «գիւղ մի հայ-հռոմի, զոր Հոդիս կոչեն»։¹⁶ Այս ժամանակաշրջանում Արևմտեան Հայաստանում արդէն մեծ ծաւալներով առաջ էր գնում քրիստոնեաների, այդ թւում՝ հայ հռոմեաների մահմեդականացման գործընթացը¹⁷։ 1665-66 թթ. հովուա-

11 Տե՛ս Δοσίθεος πατριάρχης Ιεροσολύμων, Τόμος χαράς, εκδ. Β. Ρηγούπουλου, Θεσσαλονίκη, 1985. Էջ 94:

12 Ռազմական ու վարչական միասն, որը բաղկացած էր «վանդաներից»։ Երկու-չորս տուրմաներ միասին կազմում էին մեկ բանակաթեմ (տե՛ս A. Kazhdan, "Tourma", - Oxford Dictionary of Byzantium, հ. 3, էջ 2100):

13 Տե՛ս Constantine Porphyrogenitus, *De Administrando Imperio*, Greek text edited by Gy. Moravcsik, English Translation by R. J. H. Jenkins, New, Revised Edition, Dumbarton Oaks, Washington, 1967, էջ 226-227. *Constantino Porfirogenito, De Thematibus*, introduzione-testo critico-commento a cura di A. Pertusi, Città del Vaticano, Biblioteca Apostolica Vaticana, 1952, էջ 73. Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանօթ. Հ. Բարթիկեանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բիզանդական աղբյուրներ Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1970, էջ 26, 170. Ν. Σ. Ακριτίδης, *Η ιστορική γεωγραφία του Οικουμενικού Πατριαρχείου από τον 9ο αι. μ. Χ. μέχρι το 1453*, εκδ. οίκος Α. Σταμούλη, Θεσσαλονίκη, 2009, էջ 110, 118:

14 Տե՛ս Notitiae episcopatum ecclesiae constanopolitanæ. Texte critique, introduction et notes par J. Darrouzès. Paris, 1981, էջ 287: Նշեալ տեղանունների ճշգրիտ տեղադրութիւնը դուրս է մեր այս հրապարակման նպատակից, ուստի այն թողնում ենք մեկ այլ աղբյուրի:

15 Հայապատում. Պատմիչք և պատմութիւնք Հայոց, յօրինեալ և հաւաքեալ ի Հ. Ղևոնդեայ Վ. Մ. Ալիշան, Վեներտիկ, Ս. Ղազար, 1901, էջ 552:

16 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատ. Մեարոպ վրդ. Նշանեան, Երուսաղէմ, տպ. Առաք. Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 28:

17 Այս գործընթացի մանրամասնութիւնների մասին տե՛ս Գ. Ղազարեան, *Անտիոքի պատրիարքութեան հայկական թեմերը (Ե-ԻԱ դդ.)*, - Արևելեան աղբյուրագիտութիւն - 2, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2020 (այսուհետեւ՝ Ղազարեան, *Անտիոքի*), էջ 403:

պետական այցելութեամբ Արև-մտեան Հայաստան ու Զաւախք է ժամանել Անտիոքի Մակար Գ. պատրիարքը (1647-1672 թթ.), որը թողել է իր հօտի ողբալի վիճակի նկարագրութիւնը: Հայրապետին առաջնորդած տեղացի մի քահանայի պատմածով՝ նրա երիտասարդ տարիներին միայն Չմշկածագում ու շրջանում եղել է 48 օրթողոքս քահանայ, մինչդեռ Մակարի այցելութեան պահին այնտեղ կար ընդամենը 12 ուղղափառ ընտանիք: Մնացեալները հովիւ չունենալու պատճառով դաւանափոխ էին եղել՝ դառնալով հայ առաքելական, նեստորական, ասորի-յակոբիտ ևն: Դրութիւնը միաթարական չէր նաև Կարինի թեմում: Մակար պատրիարքը փորձել է շտկել դրութիւնը, որն առաջացել էր հովիւների բացակայութեան և անտարբերութեան պատճառով: Նա Կարնոյ եպիսկոպոս է ձեռնադրել Ղեռնդ անունով մի աբեղայի՝ ծնունդով Հարգուս, այսինքն՝ հէնց Հոգուս գիւղից¹⁸:

Նորագոյն շրջանում Հոգուսի մասին մի փոքրիկ ակնարկ ունի Գարեգին եպս. Սրուանձտեանցը (1840-1892 թթ.), որը 1879 թ. Արևմտեան Հայաստան կատարած իր երկրորդ շրջագայութեան ժամանակ օթեանել է Հոգուսում. «Լեռնակող է մեր ճանապարհը, և երեկոյեան իջեանն ըրինք Հողիս գեղ, որոյ բնակիչք Հայ-հոռոմ են»¹⁹: Հաւանաբար, հէնց այս ընթացքում է սրբազանը գրանցել գիւղի մասին տուեալները: Այսպէս, անուանի հայագէտը թուարկում է Հոգուսը Կամախի (Բեմախի) շրջանի 26 գիւղերի մէջ: Այն ունէր

միայն հայ բնակչութիւն՝ 80 տուն և 1300 բնակիչ, որոնցից 120-ը տեղի «Արշակունեան» վարժարանի սաներ էին: Գարեգին սրբազանը նշում է նաև գիւղի Ս. Տիրամայր եկեղեցու և վարժարանի հասոյթներն ու դրամական վիճակը²⁰:

Անցեալ դարի սկզբում Հոգուսի մասին վիճակագրական տուեալներ է հաղորդել «Փարհատը»՝ Մ. Գասապեանը (1882-1945 թթ.): Նրա համաձայն՝ Հոգուսն ունէր 300 տուն, որը բազմապատկած միջինը 5 շնչով, ստացւում շուրջ 1500 հոգի: Ըստ նոյն հեղինակի՝ Հոգուսի դպրոցն ունէր 3 ուսուցիչ և 450 սան, որոնցից 250-ը՝ տղայ, մնացեալը՝ աղջիկ²¹:

Թէպէտև Հոգուսի բնակչութեան թուի մասին տուեալները ուսումնասիրողների երկերում փոքր-ինչ տարբերում են, այնուհանդերձ պարզ է, որ սա Արևմտեան Հայաստանի հայ հոռոմների ամենամարդաշատ բնակավայրն էր: Հայոց Յեղասպանութեան ընթացքում ինչպէս կը տեսնենք, այն հայաթափուեց: Ներկայումս գիւղը թուրքաբնակ է և կոչւում է «Ուլուչինար»:

Եւ վերջապէս, մի քանի խօսք առաջարկուող յօդուածների մասին: Դրանք երկուսն էլ հրապարակուել են 1955 թ.: Առաջին յօդուածը՝ հեղինակուած Մ. Մառաբեկլիսի և Ա. Վակալուպուլոսի կողմից, գետեղուած է մի ժողովածոյի մէջ, որտեղ ներկայացուած են 1923 թ. Լոզանի պայմանագրով Թուրքիայից Յունաստան, մասնաւորապէս Թեսաղոնիկէի շրջան տեղափոխուած յոյների բնակավայրերը՝ յարակից ազգագրական ու պատմական տեղեկութիւններով հանդերձ: Երկրորդ յօդուածի հեղինակն է տարրական դպրոցի

18 Ст'а К. А. Панченко, Митрополиты и епархии православной Антиохийской Церкви в описании Патриарха Макария III аз За'ума (1665 г.), - Вестник церковной истории, 2012, № 1-2 (25-26), էջ 141-142. հմմտ. Ղազարեան, Անտիոքի, էջ 403-405:

19 Սրուանձտեանց Գարեգին, վրդ., Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Բ, 1884, Կ. Պոլիս, էջ 64:

20 Ст'а Գ. Սրուանձտեանց, Երկեր, հ. 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 493:

21 Ст'а Ֆարհատ, Հայ-հոռոմները կամ յունադասան Հայերը [Ուսումնասիրութեան փորձ], - «Ազատամարտ», 1910, թիւ 248, էջ 2:

ուսուցիչ ոմն Կ. Լամցիդիս, որը հաւանաբար հողուցիների շառաւիղ է: Յօդուածը լոյս է տեսել պոնտացի յոյների պատմութեանն ու ժառանգութեան գիտական ուսումնասիրութեանը նուիրուած ΠΟΝ-ΤΙΑΚΉ Εστία («Պոնտական Օջախ») պարբերականում:

Յոսոսով ենք, որ այս նիւթերի հրապարակումը օգտակար կը լինի հայագէտներին լայն շրջանակների, յատկապէս պատմաբանների, ազգագրագէտների և ցեղասպանագէտների համար:

M. ΜΑΡΑΒΕΛΑΚΗΣ, Α. ΒΑΚΑΛΟ-ΠΟΥΛΟΣ, «ΑΙ ΠΡΟΣΦΥΓΙΚΑΙ ΕΓΚΑΤΑΣΤΑΣΕΙΣ ΕΝ Τῇ ΠΕΡΙΟΧῃ ΘΕΣΣΑΛΟΝΙΚΗΣ», ΕΤΑΙΡΕΙΑ ΜΑΚΕΔΟΝΙΚΩΝ ΣΠΟΥΔΩΝ, ΙΔΡΥΜΑ ΜΕΛΕΤΩΝ ΧΕΡΣΟΝΗΣΟΥ ΤΟΥ ΑΙΜΟΥ 4, ΘΕΣΣΑΛΟΝΙΚΗ, 1955.

ՀԱՐԻԻՐ ՌԻԹՍՈՒՆ ՀԻՆԳ ԸՆՏԱՆԻՔ (1926)

(ՊՈՆՏՈՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ²² 98 եւ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻՑ 87)²³

- 22 «Պոնտոսի Հայաստան» (Αρμενία τοῦ Πόντου). արհեստական տեղանուն է, որը ցոյց է տալիս հեղինակի անտեղեկութիւնը Հայաստանի աշխարհագրութեան վերաբերեալ:
- 23 Մինչև հողուցիների՝ Ռուդուարում հաստատուելը՝ 1920 թ., այստեղ կար 217 բնակիչ: Մեզ ճշգրիտ յայտնի չէ, բայց ենթադրաբար դրանք թուրքեր էին, որոնք հաւանաբար գաղթեցին թուրքիա: Դրանից յետոյ գիտում հաստատուեցին թուրքիայից անդադրածները՝ 87 լոյս ընտանիքներ Մագնիսիայի Մուրադիէ գիւղից, 98 ընտանիք Հողուսից ու 6 ընտանիք Ակնի Մուշեղկայ գիւղից: 1928 թ. Դիավատա վերանուանուած նախկին Ռուդուարն ուներ ընդհանուր հաշուով 606 բնակիչ: Տե՛ս <https://www.gtr.gr/Locpage.asp?id=7933&lng=1>. Παύλου Δρανδάκη, Μεγάλη Ελληνική Εγκυκλο-παίδεια, β. 9, էջ 170. Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-9-Χογούζ»): Եթէ ընդունենք, որ սրանց մօտաւորապէս կէսը, այսինքն՝ մօտ 300 հոգի էին հողուցիներ, ապա հասկանալի է դառնում, որ նրանց մեծ մասն իրօք կոտորուել էր մինչև Յունաստան գաղթելը, ինչպէս և նկարագրուած է Կ. Լամցիդիսի յօդուածում:

ԴԻԱՎԱՏԱ (Դուդուար) Ա. ՊՈՆՏՈՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀՈՂՈՒՄ

Պոնտոսի Հայաստանից գաղթականները ծագում են Հողուս²⁴ գիւղից, որը գտնուում է Եփրատ գետի մօտ: Այն ենթարկւում է էրզրումի վիլայեթի Կեմախի կայմականութեանն ու Երզնկայի մութասարիֆութեանը: Կեմախից հեռու է 30, իսկ Երզնկայից՝ 90 կմ: Հողուսի անմիջական հարևանութեամբ գիւղերը բոլորը թուրքական ու քրդական էին, իսկ զբաղեցրած 4-15 ժամ հեռու՝ գիւղերը՝ հայկական: Միայն 8-12 ժամ հեռու է գին, Միսարդա, Վանք ու Ձորակ գիւղերն էին, որ ունէին խառը՝ յոյն և թուրք բնակչութիւն²⁵: Հողուսն ունէր 110 յոյն ընտանիքներ՝ բոլորն անխտիր հայախօս²⁶:

24 Թե՛ այս, թե՛ յաջորդ յօդուածագիրները կիրառում են Հողուս (Χογούζ) անը: Մենք նպատակաւորմար գտանք կիրառել բուն «Հողուս» անը:

25 Խօսքը Ակն (թուրքերէն՝ Էգին) քաղաքի և շրջանի չորս հազ հոռոմ գիւղերի՝ Մուշեղկայի, Վանքի և Ձորակի մասին է: Հեղինակը բաց է թողել Օրգու գիւղը:

26 Փոքր Ասիայի հայալեզու լոյսերի մասին ընդհանուր ատմամբ տե՛ս Գ. Ի. Աναστασιάδου, Χάϊ-Χοροῦμ (Αρμενόγλωσσοι Έλληνες),- Μικρασιατικά Χρονικά 4 (1948), էջ 37-48. հմմտ. Γεωργίου Κλ. Σκαλιέρη, Λαοὶ καὶ φυλαὶ τῆς Μικρᾶς Ἀσίας, Ἀθήναι, 1922, էջ 340 և շարունակութիւնը, որտեղ և կայ մատենագիտութիւն: Նշենք, որ հեղինակի՝ վերը նշած ուսումնասիրութիւններից առաջինը հայերէն թարգմանել ու նախաբանով հրատարակել է պրոֆ. Հ. Մ. Բարթիկեանը (տե՛ս Հ. Բարթիկեան, Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) յունական պարբերականներում,- Պատմա-բանասիրական հանդէս, 2008, թիւ 3, էջ 250-259): Ինչ վերաբերում է ուղղափառ հայերի՝ հայալեզու լոյսեր համարուելու երևոյթին, ապա մենք այն լուսաբանել ենք առանձին ուսումնասիրութեամբ. տե՛ս Գ. Ղազարեան, Հայ հոռոմների ազգային ինքնութեան խնդրի շուրջ,- Լեւոն Խաչիկեան. հարիւրամեակ: Նիւթեր ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանի ծննդեան հարիւրամեակին նուիրուած հալագիտական միջազգային գիտաժողովի (28-29 յունիսի 2018 թ.), Եր., Մատենադարան, 2019, էջ 180-204:

Հողուսը գտնուում է 1500 մ. բարձրության վրայ և ունի բարեխառն կլիմայ: Սովորաբար քամիներն արևելքից են փչում: Զիւնը տեղում է նոյեմբերի և դեկտեմբերի միջև ու մնում է մինչև մարտ, երբ սկսում է հալոցքը:

Գիւղի պատմութեան վերաբերեալ յըստակ ոչինչ չգիտենք: Աւանդութիւնն ասում է, թէ ժամանակին գիւղն աւելի մեծ է եղել՝ բաղկացած լինելով եօթ թաղերից, սակայն յետագայում մեզ անյայտ պատճառով բնակիչները հեռացել ու բնակութիւն են հաստատել Գէյվէում ու Նիկոմեդիայում, որտեղ յայտնի էին որպէս հայ հռոմէներ (հայախօս յոյներ)²⁷: Հողուսում մնացել են միայն եօթ ընտանիքներ, որոնք ժամանակի ընթացքում դարձել են հարիւր տասը:

1916 թ. հոկտեմբերի 28-ին Հողուսի բնակիչները, թուրքական զօրքի առաջխաղացումից վախենալով, իրենց գիւղը լքեցին և Քրդստանի միջով ոտքով հասան Երզնկա, որը գրաւուած էր ռուսական զօրքերի կողմից: Մօտաւորապէս մեկ տարի այնտեղ մնալուց յետոյ, հետեւելով նահանջող ռուսական զօրքին, մեծ զրկանքներից յետոյ 1918 թ. յունուարի 31-ին հասան Ռուսական Կովկաս: Նրանցից շատեր մեռել էին ճամփորդութեան ժամանակ՝ ցրտից, հիւանդութիւններից ու քրդերի յարձակումներից:

1920 թ., երբ նորից բարձրացուել էր Պոնտոսի անկախութեան հարցը²⁸, 30 ըն-

տանիք Նովոռոսիյսկից վերադարձաւ Տրապիզոն, նրանցից 4-ը՝ Հողուս: Ազգաբնակչութիւնների փոխանակման ժամանակ²⁹ վերոնշեալ ընտանիքների մեծամասնութիւնը, որոնց մէջ նաև Հողուս վերադարձած 4 ընտանիքները, հաստատուեցին Յունաստանում: Մնացեալ ընտանիքներից 15-ը՝ Ռուսաստանում, 2-ը Կոստանդնուպոլսում, 4-ը Բուլղարիայում, իսկ մեկը՝ Ռումինիայում:

Հողուսցիներն ամուսնանում էին գրեթէ միշտ իրար հետ, հազուադէպ՝ Երզնկայի կամ Էգիւնի յոյների³⁰ հետ, բայց ոչ երբեք՝ հայերի: Հարսանիքին հրաւիրում էին՝ հարազատներին չորեք³¹ ու հալուա ուղարկելով: Պսակադրութեան ժամանակ ու դրանից յետոյ հարսը 40 օր շարունակ կրում էր քող, որը յետոյ հանում էր քաւորը: Պսակադրութեան առաջին օրն ու գիշերը նորա պսակները չէին յարաբերուում: Առաջին շաբաթը նրանք փակուած էին մնում իրենց սենեակում, դրանից յետոյ բերում էին հարսի նուէրները, որոնք հարսը բաշխում էր փեսայի հարազատներին: Մեկ, երկու կամ նոյնիսկ առաւել տարիներ հարսը՝ համաձայն տարածուած սովորութեան, չէր խօսում սկեսրայրի, սկեսրոջ ու փեսայի այլ ազգականների հետ³²:

Ահաւասիկ Հողուսի նահապետական գերդաստաններից որոշներ. Սպիրօղլու,

27 Ակնի վերոնշեալ գիւղերից ու Հողուսից Ժ.Զ. ԺԷ. դդ. գաղթած հայ հոռոմները բնակութիւն էին հաստատել Իգմիթի մահաճում (պատմական Բիթանիան՝ Նիկոմեդիա մայրաքաղաքով)՝ հիմնելով Օրթագիւղ ու Խուդի գիւղերը, ինչպէս նաև Ֆեդգլի գիւղախումբը: Հողուսից և Ակնից արտագաղթող դէպի Իգմիթի մահաճ շարունակուել է ընդհուպ Մեծ Եղեռնին մայրողած տարիները:

28 Նկատի ունի Սերի պայմանագիրը (10.08.1920), որի համաձայն՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթների հետ միասին Հայաստանի կազմի մէջ

պիտի մտնէր նաև Տրապիզոնի վիլայեթը՝ պատմական Պոնտոս երկրամասը: Հողուսի տարածքը մտնում էր Էրզրումի, և ոչ թէ Տրապիզոնի վիլայեթի կազմի մէջ:

29 Լոզանի պայմանագրի (24.06. 1923) համաձայն՝ Յունաստանի ու Թուրքիայի միջև կատարուեց համապատասխանաբար ուղղափառ և մահմեդական բնակչութիւնների հարկադրական փոխանակում:

30 Իմա՝ հայ հոռոմների:

31 Յուն. τσουρέκι-ին (թուրք. çörek.) քաղցր հաց է, որը թխում է սոսն օրերին: Հաւանաբար, այս բառով նշուած է հայկական գաղթի մի տեսակ:

32 Խօսքն այսպէս կոչուած «հարսնութեան» սովորոյթի մասին է, որը պահպանուում էր հայկական մահապետական ընտանիքներում:

Տէյիրմենջօղլու, Միխալօղլու, Կարաօղլու, Փափազօղլու³³:

Հողուցիները տեղափոխվում էին Կոստանդնուպոլիս, որտեղ աշխատում էին որպէս այգեպան, Բուլղարիայում՝ որպէս սրճավաճառ ու բանուոր, Ռուսաստանում ու Ռումինիայում՝ նոյնպէս բանուոր: Նրանք ուղղափառ քրիստոնեաներ էին՝ ենթակայ Թէոդոսուպոլսի (էրզրումի) թեմին, սակայն վերջին ժամանակներում՝ Մելետիոս մետրոպոլիտի օրօք, ենթարկուեցին Անտիոքի պատրիարքութեանը³⁴: Հողուցիներն ունէին մեկ եկեղեցի՝ յանուն Աստուածածնի Ննջման, նաև՝ մօտաւորապէս տասը մատուռներ՝ գիւղից դուրս: Պատարագը մատուցւում էր յունարէն, միայն Աւետարանն ու առաքելոց թղթերն էին թուրքերէն ընթերցւում: Սուրբ Գէորգի տօնին կատարւում էր կրօնական տօնախմբութիւն³⁵:

Հողուսի տները քարաշէն էին և մեծաւ մասամբ միայրակ, միայն վերջին տարիներին սկսեցին կառուցուել նաև երկյարկանի տներ: Դրանք ուղղանկիւն էին՝ բաժանուած երկու սենեակների: Տանիքի փոխարէն ունէին ծածկ: Դրա վրայ լցւում էր կաւահող, որը գնալով գլանաձև նեղա-

նում էր՝ անձրեւներից ու ձիւնից տուներ պաշտպանելու համար: Հին տները կառուցւում էին թեք գետնի մէջ ու լուսամուտ չունէին, այլ միայն տանիքի մէջտեղում՝ երգիկ (ֆեյյիլ) (ֆեյյիլ): Հնում որպէս շինարարներ հրաւիրւում էին յոյներ՝ Պոնտոսի Խալդիա³⁶ շրջանից: Հողուսի տները փուռ չունէին, դրանց փոխարէն, հաւանաբար շրջակայքում վառելափայտ չլինելու պատճառով, տեղացիներն օգտագործում էին այսպէս կոչուած «թոնիրը» (ταντούρ), այսինքն՝ սենեակի մէջտեղում հողի մէջ թաղուած կաւէ տակառ: Այս տակառի յատակին օջախ էին վառւում ցախով կամ գոմաղբով, որպէսզի տակառի մէջ տաքացնեն ակիւղի կախուած ուտելիքը: Թոնրի ներքին պատերին ամրացնում էին այսպէս կոչուած «լաւաշները» (լաւաշիա), որոնք խմորից պատրաստուած բարակագոյն հացեր էին: 7-10 օրը մեկ թխում էին շատ լաւաշներ (500-1000 հատ)՝ բնակիչների սնունդի համար:

Հողագործութիւնը զարգացած չէր, հողագործական մթերքները միայն ցորենն ու գարին էր: Ագարակների մակերեսի միաւոր համարւում էր օրական հերկը՝ մեկ զոյգ վարող եզներով: Նուազագոյն բաժինը 15, իսկ ամենամեծը՝ 60 օրուայ հերկն էր: Ի տարբերութիւն հողագործութեան՝ անասնապահութիւնը զարգացած էր: Հողուցիները պահում էին կարաման ցեղատեսակի ոչխարներ, այծեր, կովեր, եզներ, ձիեր, ջորիներ և էշեր: Իւրաքանչիւր ընտանիք ունէր 20-150 այծ ու ոչխար, 1-5 կով, 1-2 եզ, 1 էշ, շատեր՝ 1 ձի կամ ջորի: Մեծ կենդանիների մսուրները տան բաւում էին, իսկ ոչխարների ու այծերի փաւրակները գտնւում էին գիւղից դուրս: Յունիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը, երբեմն էլ ընդհուպ այդ ամսուայ վերջը, գիւղի կենդանիները տարւում էին արօ-

33 Օսմանեան կայսրութիւնում քրիստոնէայ հայատակները յաճախ կրում էին «օղլի» թուրքերէն վերջաւորութեամբ ազգանուններ: Արդ, եթէ փորձենք գտնել նշեալ ազգանունների հայկական բնօրինակները, ապա Սպիրօղլուն Իսպիրեանն է, Տէյիրմենջօղլուն՝ Ջաղացպանեանը, Միխալօղլուն և Կարաօղլուն՝ համապատասխանաբար՝ Միքայէլեանն ու Կարայեանը, իսկ Փափազօղլուն՝ Փափազեանը կամ Տէրտէրեանը:

34 Կարինի մետրոպոլիտութիւնը սակաւամարդութեան պատճառով լուծարուեց 1900 թ., իսկ նրան ենթակայ տարածքներն անցան Ամիդի (Դիարբեքրի) մետրոպոլիտութեանը (տե՛ս Ղազարեան, *Անտիոքի*, էջ 412): Հեղինակն այստեղ անստույգ է, քանի որ երկու մետրոպոլիտութիւններն էլ մտնում էին Անտիոքի պատրիարքութեան կազմի մէջ:

35 Սբ. Գէորգի տօնն ըստ օրթոդոքս Տօնացոյցի նշում է սրբի նահատակութեան օրը՝ ապրիլի 23-ին:

36 Հայկական աղբիւրներում այս շրջանը յայտնի է «Խալդիք» անուանումով:

տավայրեր՝ «յայիլէ», որտեղ փոքր անասնապահները կուլթը, կարագի ու պանրի պատրաստումը յանձնում էին մեծ անասնապահներին, և մինչև սեզոնի վերջ կատարում էր սահմանուած հաշուետուութեան բաշխումը:

Կրթութիւնը զարգացած չէր. Հողուսն ունէր մեկ դպրոց մեկ ուսուցչով, որը դասաւանդում էր 2-3 դասարաններում: Յունարէն դասագրքերը պատուիրում էին Երզնկայում: Երեխաները սովորում էին յունարէն գրել-կարդալ, նիւթը զուգահեռաբար թարգմանում էր հայերէնի:

K. ΛΑΜΤΣΙΔΗΣ, «ΧΟΓΟΥΖ. ΕΛΛΗΝΙΚΟΝ ΑΡΜΕΝΟΦΩΝΟΝ ΧΩΡΙΟΝ ΤΟΥ ΕΡΖΙΓΓΙΑΝ ΠΟΝΤΟΥ», ΠΟΝΤΙΑΚΗ ΕΣΤΙΑ, 1956, ΤΕΥΧ. 74-75, ΣΕΛ. 3578-3581

ՀՈՂՈՒՍ. ՀԱՅԱԽՕՍ ՅՈՒՆԱԿԱՆ
ԳԻՒՂ ՊՈՆՏՈՍԻ ԵՐԶՆԼԵԿԱՅՈՒՄ
(ՊՈՆՏԱԿԱՆ ՕԶԱԽ, 1956, ՀԱՏՈՐ 74-75, էջ 3578-3581)

Կ. ԼԱՄՏԻԴԻՍ

(Վեռիայի³⁷ տարրական դպրոցի ուսուցիչ, 22.12.55)

Երզնկայի շրջանի սակաւաթիւ գիւղերից մեկն էր հայախօս Հողուս գիւղը՝ ընկած դրանից հարաւ-արեւմուտք, 16 ժամ հեռու: Հողուսին ամենամօտ աւանը Կեմախի կայմակամութիւնն էր՝ մօտաւորապէս 6 ժամ հեռու³⁸: Գիւղէց արեւելք ու դրա շուրջը շրջապատ էր կային թուրքական էրիձ, Ալէշուրտ, Խուտու, Ագանսէն, Խօջաս,

Օմակու Զախձիլ և այլք³⁹: Այդ շրջանում յունական գիւղեր չկային, իսկ հայկական գիւղերը շատ հեռու էին ընկած: Վարչականօրէն Հողուսը ենթարկւում էր Երզնկայի մուտասարիֆութեանը:

Գիւղը, գտնուելով Ծովուկ լեռան⁴⁰ (Կարդուխական լեռների⁴¹ մի հատուածի հայերէն անուանումը) ստորոտին, հիւսիսում տիրում էր լայնատարած մի դաշտի վրայ, որն արեւելքից արեւմուտք հատւում էր Եփրատ գետով: Վերջինս դաշտավայրի եզրին մի մեծ ոլորան էր անում և, Ծովուկ լեռը շրջանցելով, թեքւում էր դէպի հարաւ:

Գիւղից ցած տարածուող դաշտը չափազանց բերրի էր, սակայն ամբողջութեամբ չէ, որ մշակւում էր գիւղացիների կողմից. նրանք առաւելապէս զբաղւում էին անասնապահութեամբ, քան թէ հողագործութեամբ, քանզի ճանապարհային հաղորդակցութեան ցանցի բացակայութեան պատճառով երկրագործական մթերքները ցածր գնով էին վաճառւում: Անտառներ չկային, պտղաբեր ծառերը շատ քիչ էին: Գիւղի անուանումը հայկական է և բաղկացած է երկու բառից՝ խօ = հող և յօւս = լաւ, այսինքն «լաւ հող»⁴²:

39 Յունարէն Ἐριτζ, Σκεπούρτ, Χουτού, Ἀγανσέν, Χοτζᾶς, Ὀμακοῦ Τζαχτζῖλ: Այս անուանումները փոքր-ից աղաւաղուած պիտի լինեն, սակայն Ἐριτζ-ի մէջ ճանաչելի է Երիզը, իսկ Χουτού-ուն Խուտի գիւղն է, որը մինչև ԺԷ. դ. սկիզբը հայ հոռոմների բնակավայր էր: Նրանց՝ Իզմիրի մահանգ գաղթելուց և այնտեղ մոյնանում գիւղը հիմնելուց յետոյ, Կամախի Խուտին դարձաւ թուրքաբնակ:

40 Նոյն Մճուր լեռն է:

41 Հեղինակը «Կարդուխական», այսինքն՝ «քրդական» է անուանում Մճուրի լեռնաշղթան, որը Դերսիմի մի հատուածն է:

42 Հարկաւ սխալ ստուգաբանութիւն է: Մեր կարծիքով՝ թէ՛ Գրիգոր Կամախեցու յիշատակած «Հողուս», թէ՛ «Հողուս» ձևերը բաղկացած են «հող» գոյականի սեռական հոլովից և «ս» յօդից: Գիւղի անուանումն ապահովաբար կապուած է բերրի, արգասանդ հողի հետ, որով հարուստ է տեղանքը:

37 Վեռիա կամ Բերիա. քաղաք Յունաստանի հիւսիսում՝ Թեսալոնիկէից ոչ շատ հեռու: Պօղոս առաքելաւի քարոզչութեան կենտրոններից մեկը (տե՛ս Գործք, ԺԷ, 10-12):

38 Ըստ Ժ.-Մ. Թիերրիի՝ գիւղը գտնուում է Կամախից ուղիղ գծով 10 կմ դէպի արեւելք, ծովի մակերեսից 1100 մ. բարձր (տե՛ս J.-M. Thierry de Crussol, *Monuments Arméniens de Haute-Arménie*, CNRS éditions, Paris, 2005, էջ 100):

Գիւղում բնակւում էր 130 ընտանիք՝ բաղկացած 1050 շնչից⁴³:

Չնայած իրենց ընդարձակութեանը՝ Հողուսի տները շինուած էին խիտ-խիտ, առանց որեւէ գծագրի կամ տարրական նախագծի՝ կաած, կուտակուած մեկը միւսի վրայ: Հաւանաբար, սրա պատճառն անվտանգութիւնն էր, այսինքն՝ իրենց տներն այսպէս էին շինուած, որպէսզի յատկապէս քրդերի զինուած յարձակումների դէպքում ապահովութեան աւելի շատ հնարաւորութիւն ունենային: Տների մեծ մասը միայրակ էր, դրանց պատերը՝ ինչպէս սովորական է Արեւելքի այն տեղերի համար, շարուած էին հում աղիւսներից, իսկ տների հարթ տանիքը ծածկուած էր տրորած հողով (Δῶμα): Տների ներքին ստորաբաժանումը կախուած էր բնակիչների թուից: Ընդհանրապէս այն բաղկացած էր բաւականին ընդարձակ մեկ բաժանմունքից՝ «մուսաֆիր օթասիից» (Μουσافر ὀτασί)⁴⁴ մուտքի դիմաց՝ տան խորքում բուխարիով⁴⁵, և շուրջանակի՝ առաստաղին զուգահեռ դարակներով, որոնց յարդարանքը շատ տներում գեղարուեստական էր:

Եթէ յատակը հողից էր, ապա շուրջբոլորը և պատերին զուգահեռ (σέτια)⁴⁶ ունէին 1 մ. լայնութեամբ և 0,50 մ. բարձրութեամբ տախտակներ՝ ծածկուած փուռածքներով կամ թաղիքներով, պատերին յենուած երկար ու նեղ բարձերով: Այս սենեակի լուսաւորութիւնն ապահովուում

էր դրա մեկ կողմում առկայ փոքրիկ լուսամուտներից՝ սենեակի մեծութեանը համապատասխան: Սենեակին զուգահեռ կար մեկ այլ ընդարձակ բաժանմունք, որտեղ սովորաբար ապրում էր ընտանիքը և որի մէջտեղում էր թոնիրը (ταντούρ)՝ կաւից պատրաստուած ու գետնի մէջ թաղուած մի տեսակ մեծ տակառ, որի մէջ վառում էին գշկուր⁴⁷ (չորացած գոմաղբ), փայտ կամ ծղոտ: Ծուխը դուրս էր գալիս թոնրից վերև՝ առաստաղի քառանկին բացուածքից, որից էլ լուսաւորւում էր ողջ բաժանմունքը: Թոնրի շրջին տեղադրում էին մի խաչաձև երկաթ (χαυρτζέκ⁴⁸), որից շարում էին սննդի պատրաստման կաւէ անօթները: Օրուայ կերակուրները պատրաստելուց ու թոնիրը լաւ տաքացնելուց յետոյ դրա շիկացած պատերին կպնում էին բաւականին երկար շերտերի բացուած խմորը, մի յատուկ բարձի՝ ռափաթայի (ραπατά)⁴⁹ օգնութեամբ: Այնտեղ թխւում էր ականթարթօրէն և պոկւում էր մի կեռով՝ ակիչով (έκίς): Այսպէս էր պատրաստուում ընտանիքի հացը՝ շաբաթուայ համար նախատեսուած լաւաշը:

Այս գործերից, այսինքն՝ ընտանիքի սնունդը պատրաստելուց յետոյ թոնրի շուրջբոլորը փռում էին կապերտներ կամ գորգեր, որոնց վրայ ձմռան երեկոները շուրջանակի նստում էին կանայք ու երեխաները՝ ոտքերը կախ գցելով թոնրի մէջ, իսկ ծնկներին գցում էին վերմակ կամ ինչոր ուրիշ հաստ ծածկոց: Այնտեղ հաճելի ժամանակ էին անցկացնում՝ հեքիաթներ պատմելով կամ իրենց խնդիրները քննարկելով: Նոյն սենեակում էին գտնուում տան զանազան անօթները՝ շարուած դարակներ-

43 Վերը արդէն նշել ենք Գարեգին եպ. Սրուանձտեանցի եւ Մ. Գասապեանի տուեալները: Ըստ Ռ. Գէորգեանի եւ Պ. Փաբուշեանի՝ Ի. դ. սկզբում Հողուսում կար 50 տուն և 500 շումէ «հալախօս ուղղափառներ», ինչը հարկաւ ստոյգ թիւ չէ (տե՛ս R. H. Kévorkian, P. B. Paboudjian, նշում աշխ., էջ 456):

44 Թուրքերէն musafir odasi նշանակում է «հիւրասենեակ»:

45 Այս տեղեկութիւնը հակասում է նախորդ յօդուածին, որտեղ ասում է, որ Հողուսի տներն ունէին միայն թոնիր:

46 Սադա (բրբ.)՝ «ամբողջովին»:

47 Բնագրում՝ κουσκούρια: Հայերէն «գշկուր» նշանակում է «չորացած թրիք», «աթար»:

48 Երևի «խաչերկաթ» (խարջկաթ) բառի աղնատուած ձևն է:

49 Ռափաթա կամ բադադ՝ յատուկ բարձաձև գործիք, որով լաւաշի շերտերն ամրացնում են թոնրի պատերին:

րի վրայ, որոնք շատ տներում գեղարուեստորէն էին մշակուած:

Այս սենեակներին կից էին շտեմարանները, ախոռները, յարդանոցները ևն, որոնք իրար հետ հաղորդակցւում էին փոքրիկ ներքին դռներով:

Գիւղը կառավարում էր ծերակոյտը, որն ընտրւում էր աւագներից, և զբա կողմից նշանակւում էր ամենայարմար անձը, որը ներկայացնում էր գիւղը արտաքին հարցերում և իշխանութիւնների ու հարեան գիւղերի հետ իրենց յարաբերութիւններում: Գլխաւորապէս ողջախոհ վարչութեան և ընդհանուր առմամբ՝ այլոց հետ անթերի վերաբերմունքի շնորհիւ էր, որ այս մի բուռ յոյն ժողովրդը գոյատեւում էր Փոքր Ասիայի խորքում՝ այդքան շատ այլազգիների մէջ:

Դժուար հանգամանքներում շտապում էին նաև խնդրել երզնկացի համագլխին Փանիկ էֆենդի Լամցիդիսի՝ թուրքական դատարանների փոխդատախազի պաշտպանութիւնը կամ խորհուրդը: Բոլորի առջև ունեցած իր հեղինակութեամբ նա վայելում էր տեղացիներին՝ փաշաների ու բէյերի, կառավարիչների, քաղաքական ու զինուորական գործիչների գնահատանքն ու յարգանքը, և յաջողեցնում էր առաջնորդել յոյն ժողովրդի այս հեռաւոր հատուածին, ինչպէս նաև տարածաշրջանի ուրիշ վայրերի [յոյներին]: Տարեցներն այսօր չեն մոռացել են նրա բազմապիսի երախտիքներն ազգային, դպրոցային, եկեղեցական և այլ խնդիրներում, ու պատկառանքով են յիշատակում նրա անունը՝ նոյնիսկ մտաբերելով, որ սուլթան Համիդի օրօք հայոց կոտորածի ժամանակ փրկուեցին նրա միջամտութեան շնորհիւ. երբ կառավարիչը խիստ հրահանգ էր տուել Կեմալի տեղական իշխանութիւններին՝ որպէսզի պահպանուի հողուցիների կեանքն ու ինչքը, քանի որ նրանք զուտ հռոմէներ էին, որոնք հայերէն էին խօսում, սակայն

հայոց հետ էթնիկ որևէ կապ չունէին: Եւ այսպէս կանխուեց գիւղի կործանումը⁵⁰:

Հին ժամանակներում Հողուսը եկեղեցական առումով ենթակայ էր Թէոդոսուպոլսի (Էրզրումի) մետրոպոլիտութեանը ընդհուպ 1900 թ., որից յետոյ ենթարկուեց Կապադովկիոյ էպիսկոպոսի⁵¹: Հողուսի եկեղեցին հիմնուել է ի յիշատակ Աստուածածնի Նշման, և ամեն տարի օգոստոսի 15-ին տեղի էր ունենում տօնախմբութիւն, երբ ամբողջ գիւղը միասին ուրախանում էր քնարի (λύρα)⁵², զուռնայի ու դհուլի նուագակցութեամբ:

Գիւղից դուրս՝ կարևոր տեղերում հիմնել էին շուրջ 15 մատուռներ ի պատիւ բոլոր սրբերի, և սա առաւելաբար այն նպատակով, որպէսզի կարողանային զինուորական պարտականութիւնից ազատել նոյն թուով համագիւղացիներին՝ այդ մատուռներում եկեղեցական սպասաւորներ նշանակելով նրանց:

50 Այս տեղեկութիւնը շատ կարևոր է՝ հասկանալու համար հայ հոռոմների՝ հայախօս յոյներ համարուելու ցանկութիւնը: Վերջինիս պատճառներից մեկը, փաստօրէն, կոտորածներից փրկուելն էր, յատկապէս եթէ հաշուի առնենք, որ արիւնոտ սուլթանը, մի ձեռքով կոտորելով հայերին, միւս ձեռքով ցուցադրաբար փաղաքշում էր յոյներին՝ այդ նեղ միջոցով բացատելով հայ-յունական փոխօգնութեան ու զինակցութեան որևէ հետանկար (տե՛ս I. K. Χασιώτης, *Αδελφά έθνη εν μέσω θύελλης: Αρμένιοι και Έλληνες στις μεγάλες κρίσεις του Ανατολικού ζητήματος* (1856-1914), University Studio Press, Θεσσαλονίκη, 2015, էջ 154-159): Բնական է, որ աման պայմաններում հայ հոռոմները պիտի նախընտրէին համարուել «յոյն», և ոչ թէ սպանդի ենթակայ «երմենի»:

51 Այստեղ հեղինակը երկիցս սխալում է. նախ, Ալեքը որևէ կապ չունի Կապադովկիոյ հետ, այլ Մեծ Հայքի Ծովք նահանգի (յետագայում բիզանդական «Չորրորդ Հայքի») մէջ էր մտնում: Երկրորդ, ինչպէս արդէն ասուեց վերը՝ 1900 թ. լուծարուած Կարմոյ մետրոպոլիտութեան ենթակայ տարածքները անցան Անտիոքի պատրիարքութեան մէկ այլ մետրոպոլիտութեան՝ Ամիդի աթոռի իրաւասութեանը:

52 Հեղինակը վստահաբար այսպէս է անուանում քամանչան:

Տեղի տարօրինակ սովորութեան համաձայն՝ ունէին երկու գերեզմանոց, որոնցից մեկում՝ Աստուածածնի անուամբ, թաղում էին մեծահասակներին, իսկ միւսում՝ սուրբ Թէոդորոսի՝ մանկահասակներին:

Եկեղեցում Պատարագը մատուցւում էր յունարէն՝ բացի Աւետարանի ու առաքելական թղթերի ընթերցումից, որոնք կատարւում էին յունատառ թուրքերէնով:

Քահանաները ձեռնադրւում էին գիւղի գրագէտ մարդկանց միջից որոնք, ունենոր մարդկանց զաւակներ լինելով, սովորաբար ուղարկւում էին էգին աւանը, որտեղ սովորում էին գրել-կարդալ, եկեղեցական գրքերը, Սաղմոսարան, Ութձայն⁵³ ևն, ինչպէս նաև՝ Պատարագը և մի քիչ թուրքերէն⁵⁴: Գիւղ վերադառնալով՝ նրանք ղեկավար դեր էին ստանձնում իրենց հայրենիքի կառավարման գործում:

Այսպէս հերթականութեամբ քահանայ եղան՝ որքան յաջողացրել են իրենց յիշդուլթեան մէջ պահել այսօրուայ գիւղի ամենատարեց բնակիչները, պապա Սիմէոն Պապադոպոլոսը, ապա՝ նրա եղբայր պապա Խարալամպոսը, յետոյ՝ պապա Վասիլ Սպիրիդիսը⁵⁵, իսկ վերջինիս մահուանից յետոյ ձեռնադրուել է իր փեսայ պապա Նիկոլ Պապադոպոլոսը՝ յիշատակուածների տոհմից և որն էլ եղաւ գիւղի վերջին քահանան մինչև հողուսցիներին՝ Թեսաղոնիկէի Դիավատա նոր գիւղում բնագրուելը:

1916 թ. պապա Նիկոլի գործունէութեան, խելացիութեան ու հոգածութեան շնորհիւ հողուսցիները փրկուեցին ու ազատուեցին ստրկացումից, աքսորից ու թուրքական զինուորական իշխանութիւն-

ների այլ բարբարոսութիւններից: Նա իրազեկուել էր թուրքական տրիբունալի գաղտնի հրահանգի մասին, որով հրամայւում էր հողուսցիների հեռացումը երկրի խորքերը, քանզի քրիստոնեաները վստահութիւն չէին ներշնչում թուրք-ռուսական ռազմաճակատի այդ կարեւոր կետում: Պապա Նիկոլը հէնց որ իմացաւ թուրքերին՝ հողուսցիների տեղահանութեան մտադրութեան մասին, ինչը նշանակում էր համընդհանուր բնաջնջում, անյապաղ կապ հաստատեց ու համաձայնութիւն կայացրեց քրդերի ցեղապետերի հետ, որոնք իհարկէ պարգևի դիմաց յանձն առան և երեք հարիւր զինուած մարդկանցով իջան Մեմիս-Աղանի սարերից: Քրդերը շրջապատեցին գիւղը, գերեցին թուրքական պաշակազօրը՝ սպանելով թուրքերի հրամանատար պաշտօնեային, որը դիմադրութիւն ցուցաբերեց և, իրենց հետ առնելով գիւղի բնակիչներին՝ տեղաշարժելու ենթակայ նրանց գոյքի հետ մեկտեղ, քրդական գիւղերի ու դժուարանցանքների լեռնային տեղերով ու ձմեռնային խստագոյն պայմանների միջով նրանց առաջնորդեցին: Ռազմաճակատը շրջանցելով՝ քրդերը հողուսցիներին յանձնեցին ռուսական զօրքի առաջապահ ջոկատին: Ռուսաց զինուորական ղեկավարութիւնը, այս բաժնութիւնն ընդունելով, տեղաշարժող միջոցներով տարաւ Երզնկա, որտեղ մինչև Հոկտեմբերեան յեղափոխութիւնը հողուսցիներին խնամեց Ռուսական Կարմիր Խաչը: Դրանից յետոյ հողուսցիները թողնուեցին իրենց բախտին, ու որպէսզի նորից թուրքերի ձեռքը չընկնեն, 1918 թ. յունուարին խուճապահար հետեցին նահանջող զօրքերին: Ծանապարհներին նրանք համատարած կոտորուեցին, իսկ որոնք յաջողեցին փրկուել՝ մարդկանց կտորտանքներ դարձած, ցրտահարութիւնից անդամահատուած, ցրուեցին ներքին Ռուսիոյ տարբեր քաղաքներով:

53 Յուն. Ὁκτώηχος. Ուղղափառ Եկեղեցւոյ հիմնական Ծարակնոց:

54 Ակնում յունական կրթական հաստատութիւն չկար, այնպէս որ հողուսցի տիրացուները սովորում էին հայկական վարժարաններում:

55 Թուրքերէն՝ Սպիրոլլու, հելլենացուած ձևը՝ Սպիրիդիս: Բուն հայերէնն է «Իսպիրեան»:

Նրանցից մի հատուած այն ժամանակուայ Պոնտոսի հանրապետութեան վարչութիւնը 1921-22 թթ. միտումնաւոր, քաղաքական նպատակներով տեղափոխեց Տրապիզոն, որտեղ նորից կոտորածի ենթարկուեց: Ի վերջոյ, ողջ մնացածները գործունեայ պապա Նիկոլի գլխաւորութեամբ մեկնեցին Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից տեղափոխուեցին ու բնագրուեցին Դիավատայում:

Հոդուսցիներն ունէին նոյն բարքերն ու սովորութիւնները, որոնք կային Պոնտոսի բոլոր շրջաններում և որոնք կրօնական մոլեռանդութեամբ փոխանցում էին սերնդէ սերունդ: Հարսանիքներին, նշանդէքներին ու կնունքներին երգում էին թուրքական⁵⁶ երգեր: Թաղման ողբասացութիւնները ևս թուրքերէն լեզուով էին ասւում:

Արանց տարազը բաղկացած էր բըրդեայ ճերմակ վարտիքից (շալվարից), իսկ պիջակի փոխարէն հագնում էին ասեղնագործ բաճկոն (կրետացիների բաճկոնի պէս), որը կոչւում էր «սալթա»: Որպէս գլխանոց կիրառում էին կոնաձև ֆես՝ պատրաստուած խտացուած բրդից (քեչէ), իսկ կօշիկը եմենիներ⁵⁷ կամ չարոխներ: Կանանց հագուստները մակեդոնացի կանանց տարազի պէս էին՝ մի փոքր զանազանութեամբ⁵⁸: Նրանց մեծ մասը զարդարւում

էր տարբեր ոսկեղէնով, մեկ, հինգ լիրա կամ աւելի նուազ արժողութեամբ մետաղադրամներով՝ գեղարուեստօրէն իրար կցուած, նաև՝ բազպաններ, ականջօղեր և ճակատակալներ:

Հոդուսցիների լեզուն մաքուր հայերէն չէր, այլ հայերէնի, աղճատուած պոնտական բարբառի, թուրքերէնի, անգամ պարսկերէնի մի խառնուրդ, որ միայն լեզուաբանները կարող են բացատրել ու դասել Ասիայում խօսուող լեզուներից մեկի հետ⁵⁹:

Թէ ե՛րբ և ինչպէ՛ս է յոյն ժողովրդի այս հատուածը հաստատուել այնտեղ՝ կարդուխեան լեռների հեռաւոր կէտում, քրդերի ու թուրքերի միջև, անգամ գերտարեց հոդուսցիներն անզօր են յստակեցնել ու բացատրել⁶⁰: Միայն սերնդէ սերունդ փոխանցուող աւանդութիւնն է ասում, թէ ենիչերիների ժամանակ (անյայտ է՝ ճշգրիտ ե՛րբ) Հոդուսը ենթարկուել է յարձակման ու կողոպտման: Իրենց ամբողջական տնտեսական սնանկացումից և մասամբ՝ համագիւղացիներից շատերի սպանութիւնից առաջացած վախի մթնոլորտից յետոյ՝ խուսափելու համար հաւանական ապագայ բռնութիւններից ու աղետներից, հոդուսցիները վճռեցին ու բոլորով գաղթեցին էգէեան ծովի ափերը, որպէսզի ապրեն խիտ յոյն տարրի մէջ, և բնակութիւն հաստատեցին Զմիւռնիոյ և

56 Թերևս ճիշտ է՝ թուրքերէն: Հետաքրքրական է, որ Աթէնքի Փոքրասիական հետազօտութիւնների կենտրոնի՝ արդէն ճշում ծրարում յիշատակուած է հոդուսցիների՝ հայերէն միակ երգը՝ «Յախալիմ»-ին, աւելի ստույգ՝ Յալալիմ, որը զատկական երգ է:

57 Այծի կաշուից կարուած փափուկ կօշիկներ՝ կեռքերով:

58 Չենք կարող ասել, թէ որքանով ճշմարիտ է այս տեղեկութիւնը, սակայն հոդուսցիների ու մակեդոնացիների միջև տարուած այս զուգահեռը թերևս պատահական չէ, և նպատակ ունի՝ ցոյց տալու մակեդոնացի յոյների ու «հայախօս» յոյների ազգակցութիւնը՝ մի բան, ինչը կը ճշմանակէր, թէ բնագրուելով հիւսիսային Յունաստանում՝ հոդուսցիները հայրենադարձուել են: Դա հար-

կատր էր, քանի որ տեղացի յոյները առանձնապէս քաղցր աչքով չէի նայում կասկածելի եկուորների:

59 Յօդուածագիրն այստեղ իմարկէ սխալում է, քանի որ հայոց խօսակցական լեզուն, թէ՛ առաջ, թէ՛ այժմ աղեցուն է օտարաբանութիւններով: Օրինակ՝ թիֆլիսահայոց բարբառը լի է օտար՝ վրացերէն, պարսկերէն, թուրքերէն բառերով, և այդուհանդերձ չի դադարում հայերէնի բարբառ լինելուց:

60 Իրականում բացատրելու որևէ կարիք չկայ, եթէ ընդունենք պատմական ճշմարտութիւնը. հայ հոռոմները ոչ թէ յոյներ էին, այլ բնիկ հայեր, որոնք և իսկբանէ ապրում էին իրենց Հայրենիքում:

Պրոուսայի միջև ընկած Գէյվէ գիւղում⁶¹, որի բնակիչներն առ այսօր⁶² որպէս իրենց մայրենի լեզու պահպանում են հոլոլսցիների բարբառը: Այն բանից յետոյ, երբ 300 հոլոլսցի ընտանիքներ արտագաղթեցին Գէյվէ, հոլոլսում մնացին եօթ ընտանիք⁶³, որոնք աղքատութեան պատճառով չկարողացան հետեւել իրենց հայրենակիցներին, մնացին տեղում ու դարձան թթիւմորն այն հոլոլսցիների, որոնք յետագայում աճեցին ու դարձան 130 ընտանիք:

Այս ամենը փոխանցուել է բանաւոր կերպով ու բացարձակ ճշգրիտ չէ: Պապա Նիկոլի ցուցումով ու գործութունէութեան շնորհիւ այստեղ՝ Յունաստանում՝ Թեսաղոնիկէի Դիավատա գիւղում բնակութիւն են հաստատել 103 հոլոլսցի ընտանիք, որոնք զբաղւում են երկրագործութեամբ ու բանջարաբուծութեամբ:

61 Հեղինակն այստեղ ևս ի ցոյց է դնում աշխարհագրութիւնից իր թերի գիտելիքները. նախ՝ Գէյվէ ասանը գտնուում է Իզմիրի մօտ, և երկրորդ՝ Իզմիրը ոչ Էգէեան ծովի ափին է գտնուում, ոչ էլ Զմիւռնիոյ և Պրուսայի միջև:

62 Հեղինակն այստեղ ևս սխալւում է, քանի որ Իզմիրի նահանգ գաղթած հայ հոռոմները զանգուածաբար ցեղասպանուեցին 1920 թ. ամռանը:

63 Մեր կարծիքով՝ եօթը թիւը զուտ խորհրդանշական բնոյթ կարող է կրել: